ՀԱՆԴԷՍ ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ԷՏՄՈՆՏՈՑ ՏԷ ԱՄԻԶԻՍ ԻՏԱԼԱՑԻՈՑ

(Տես Հա. Լէ. 238, 289, — ԼԸ. 17, 165, 274, — ԼԹ. 174, 259, — Խ. 72, 161).

ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐՆ

Այս կէտիս իմ մանրազնին և լուսաւոր յիշատակացս շղթայն, որ ներելի կ'ընեն երկայն նկարագրութիւնքը, կը խորտակի. և այլ ուրիշ բան չեմ յիշեր՝ բայց նեղիչ ընթացիկ կարգ մը Յոկեղեր մէկ ափունքէն 'ի միւսն և յեւրոպէէ յԱսիա. յետ որոց իրիկունը կը տեսնէի իբրև յերազի, լուսափայլ քաղաքաց, բազմակոյտ ամբոխից, անտառաց, նաւատորմիղաց, բլրոց առկիէս աբրագութեամբ անցնիլը, և մերձաւոր բաժանման մտածութիւնն ամենայն իրաց տխրութեան թեթև գոյն մը կուտար, իբրև թէ արդէն այն տեսիլներն ուրիշ բան չըլլային՝ բայց հեռաւոր երկրի մը յիշատակք։

Մզկիթք.

Եւ սակայն քանի մը պատկերք՝ անձանց և իրաց փախստեան մէջ անշարժք կը մնան, որոց թուի ինձ առընթերակայ ըլլալ՝ երբ այն օրերը կը մտածեմ։

Կը յիշեմ այն գեղեցիկ առաւօտը՝ յորում մեծաւ մասամբ այց եկայ սերբական մզկիթաց, և մտածելով վրան, դեռ կարծես թէ իմ չորս կողմն անհուն դատարկութիւն մը և մեծաշուք լռութիւն մը կը պատէ։ Որբոյն Սոփիայի պատկերն՝ այն տխտանեան որմոց մէջ առաջին անգամ մտնելուդ զգացած զարմանքդ՝ բնաւ չի նուազեցներ։ Հնալ, ինչպէս ուրիշ տեղ, յաղթողաց կրօնքն պարտելոց կրօնից արուեստը իւրացուցեր է։ Գրեթէ բոլոր մզկիթք՝ Յուստինիանոսի կաթողիկէին նմանութիւնք են. ունին մեծ գմբեթը, ստորանկեալ կիսագմբեթս, գաւիթս, կամարակապս. ոմանք յունական խաչին ձեր ունին։ Այլ իսլամականութիւնն ամենայն իրաց վրայ իր յատուկ գոյնը և լոյսը սփռած է, այնպէս որ այն ծանօթ ձևոց բովանդակութիւնն նոր չի նուաղեր մ'երևոյթը կ'ընծայէ, յորում կը տեսնես անծանօթ աչխարհի մը հոգիքնը և կը զգաս ուրիշ Աստուծոյ մը օդը։ Ահագին դահլիճք են, խիստ և մեծագործ պարզութեամբ մը, ամեն դին սպիտակ, և անթիւ պատուհանաք պայծառացեալ, որ ամեն կողմ քաղցր և հաւասար լոյս մը կը ծաւալեն, յորում այլ մէկ ծայրէն 'ի միւսն զամենայն ինչ կը տեսնէ, և մտածութեան հետ մէկտեղ կը հանդչի գոգցես նիրհեալ անոյշ և սփիւռ հանդարտութեան մը մէջ, որ կը նմանի ձիւնախաղալ հովտի մը, սպիտակափայլ երկնիւք ծածկուած։ Զէիր կարծեր որ փակուած տեղոյ մը մէջ ըլլաս, եթէ չըսէիր քու քայլիդ հնչական արձագանգը։ Զկայ ինչ որ միաքը թարթափեցընէ. այն դատարկութեան և պայծառութեան

digitised by A.R.A.R.@

մէջէն մոսծուլթիւնն ուղղակի կ'երթայ առ առարկայն երկրպագութեան։ Ձկայ հոն ոչ տխրութեան և ոչ արհաւրաց նիւթ. չկան հոն ոչ պատրանք, ոչ խորհուրդք, ոչ մեղայ անկիւնք, յորում ընդ աղօտ փայլին գերմարդկային էակաց բազմամանուած դասակարգութեան մը պատկերք, որ կը չփոթեն միտքը. չկայ հոն բայց մենաւոր Աստուծոյ մը պայծառ, յստակ, ակնախտիղ, ահաւոր գաղափարն, որ նախամեծար կը սիրէ լուսապատար անապատից խիստ մերկութիւնը, և իր անձին ուրիշ դրօշեալ չընդունիր՝ բայց զերկինս։ Կոստանդնուպոլսոյ բոլոր կայսերական մզկիթք՝ մեծութեան այս նոյն երևոյթը կ'ընծայեն, որ կը բարձրացընէ միտքը, և պարզութեան՝ որ զայն կառուցանել կու տայ 'ի մի միայն խորհուրդ. և 'ի մասնականս այնպէս քիչ կը տարբերին յիրերաց, որ դժուարին է մի առ մի զայնս յիշել։ Ահմէտի մզկիթն արտաքուստ սոսկավիթխար, պակայն իբրև օդեղէն չէնք մը վայելուչ և թեթև, իր գմբէթը կը յեցընէ սպիտակ կիճէ չորս բոլորշի տարապայման խարսխաց վրայ, որոց ծոցը կընային բացուիլ չորս փոքր մզկիթք, և միայն է 'ի Ստամպօլ՝ որ վեց մինարէից փառաւոր պակը ունենայ։ Սիւլէյմանի մզկիթն, որ տաճարէ մ'աւելի՝ նուիրական քաղաք մ'է, յորում օտարականն կը կորսուի, երեք դահլճաք յօրինեալ է, և իր Սուրբ Սոփիայինէն աւելի բարձր գմբէթն, կը հանդչի վարդագոյն հատաքարէ չորս զարմանակերտ սեանց վրայ, որ կը յիշեցընեն Դալիֆոռնիոյ հսկայաբերձ ասնուանի ծառոց բունները։ Մէհէմմէտի մզկիթն՝ սպիտակ և զուարթ Սուրբ Սոփիա մ'է. Պայազիտին՝ ձևոց վայելչութեան առաջնութիւնը կը վայելէ. Օսմանինն՝ բոլոր կճեայ է. Շահ–Զատէինն՝ Ստամպօլի ամենէն բարեգեղ երկու մինարէքը ունի. Ագ–Սէբայինն՝ տաճկական արուեստին վերանորոգութեան ամենէն նազելի օրինակն է. Սէլիմինն ամենէն ծանրն է, Մահմատինն ամենէն նորաձևն, Վալիտէ Սուլթանինն ամենէն զարդարունն։ Իւրաքանչիւրն իրեն սեփական գեղեցկութիւն մը կամ առասպել մը կամ առանձնաշնորհութիւն մ'ունի։ Սուլթան–Ահմէտ՝ Մարգարէին դրօշը կը պահէ, Սուլթան–Պայազիտ աղաւնեաց պակեալ է, Սիւլէյմանիէ՝ Դարա-հիսարի արձանագրութեամբք հռչակաւոր է, Վալիտէ–Սուլթան կեղծ ոսկեղէն սիւնը ունի, որ կանէայ ատաղողին կեանքը արժեց. Սուլթան–Մէհէմմէտ կը տեսնէ « երկոտասան կայսերական մզկիթս, որ գլուխնին իրեն չորս դին կը խոնարհեցընեն, ինչպէս Յովսեփայ որային դիմաց կը խոնարհէին եղբարց որայքն »։ Միոյն մէջ կ'ամբառնային կայսերական պալատան և Յուստինիանոսի Աւգոստէոնին սիւներն, որ կրեցին Աստղկան, Թէոդորայի և Եւդոքսիայ արձանքը. այլոց մէջ կը գտնուէին Քաղկեդոնի հին եկեղեցեաց կիճերն, Ցոյիոյ աւերակաց սիւնքն, Եգիպտոսի տաճարաց խարիսխքն, 'ի պարսկային արքունեաց յափշտակեալ աղնուագին ապակիքն, կրկիսից, ատենից, ջրմղից, կաթողեկեցից նիւթք. ամենայն ինչ խառնիխուռն և անհետացեալ յաղթող կրօնից անհուն սպիտակութեան մէջ։ Ներսն աւելի ևս նուազ կը զանազանին քան արտաքին ձևոյն մէջ։ Խորը կիճէ սալիոն մը կայ. գիմացը, Սուլթանին պատշգամն՝ ոսկեզօծ վանդակով մը փակուած. Մեհրապի քով, երկու վիթխարի ճրագարանք՝ որ արմաւենեաց բնից պէս բարձր ջահեր կը վերցընեն. և ամբողջ միջավայրին մէջ՝ մեծամեծ ապակեայ գունտերով ձևացած անթիւ կանթեղք, և տարօրինակ կերպով մը շարուած, որ աւելի յատուկ կ'երևի պարահանդիսի մը քան կրօնական տօնախմբութեան մը։ Սրբազան մեծամեծ արձանագրութիւնքն, որ կը պատեն խարսխաց, դրանց, գմբեթից պատուհանաց բոլորտիքը, կճոյ նմանութեամբ նկարուած քանի մը կեղծ զարդեր, և ծաղկաձև գծագրեալ և գունաւորեալ ապակիք, են միակ պաճուճանք որ դուրս ցատկեն այն հոյակապ

digitised by A.R.A.R.@

որմնց սպիտակ մերկութեան մէջ։ Պարմարիոնի ճոխութիւնք սիռուած են կը-ճասալ անդաստակաց, գաւիթներըն չբրլ-ջապատող կամարակապից, լուսցմանց աղբերաց, մինարէներու մէջ. այլ չեն այլայլեր շինուածոյն վայելչաբար խիստ և ծանր դրոյմը, բոլորովին սպիտակ, կանաչով պարփակեալ, և գմբեթիւք պսակեալ, փայլակնանշոյլ երկնից կապուտին վրայ։ Մզկիթն՝ցանկապատին միայն փոքրագոյն մասը կը գրաւէ, որ գաւթաց և տանց բաւիղ մը կը բովանդակէ։ Եւ կան հոս լաբանք Ղուրանը կարդալու համար և սոսկականաց գանձուց համար պահեստի տեղիք, գրատունք և ճեմարանք, բժշկութեան դրպրոցք և մանկանց դպրոցք, ուսանողաց համար թաղք և ազքատաց համար խոհանոցք, յիմարանոցք, հիւանդանոցք, ճանապարհորդաց ապաստանարանք, բաղանեաց սրահք. ասպնջական և բարեբար փոքր քաղաք մը, տաճարին բարձրակառոյց զանգուածոյն չորս կողմը խոնեալ, իբրև լերան մ'ոտքն, և հակայաձև ծառուք հովանաւորեալ։ Բայց այս ամենայն պատկերք մթագնեցան 'ի միտս իմ. և այս վայրկենիս ուրիշ բան չեմ տեսներ, բայց իմ անձիս սեաւ փոքրիկ բիծը, գոգցեռ հիւլէի մը պէս մոլորեալ ահագին դահլեճաց մէջ, դեռնամածեալ աղօթող փոքրագոյն տաճկաց երկայն գծից մէջ. և յաւաղ կ'երթամ զշտեսեալ այն սպիտակութենէն, յապուշ հարեալ այն օտարոտի լուսէն, ընդարմացեալ այն անբաւութենէն, ընդ քարշ տանելով իմ պատառոտած հողմեսափքս և իմ միշկեալ նկարագրողի գոռոզութիւնս. և ինձ կ'երևէր թէ մէկ մզկիթն միւսոյն հետ կը խառնուի, և թէ իմ բոլորտիքս յամենայն կողմանց կը տարածուի խարբխաց և կամարաց անզրաւ յաջորդութիւն մը, և անսպառելի սպիտակ ամբոխ մը, յորում իմ աչքս կը կորսուի։

Ջրամբարք.

Ուրիշ օրուան մը յիշատակէն համակ մթիւք են և գաղտնեաց և ցնորիւք լցեալ։ Մահմետական տան մը գաւթին մէջ կը մնեմ, ջահի մը լուսով կ'ինչնեմ խաւարչտին և թաց ամանդոյ մը մինչև վերջին ատիճանը, և կը գտնուիմ եէրէ–պաթան Ներբայի կամարաց ներքև, կոստանդիանոսի մեծ արքուեակաև ջրամբարն, որու համար Պատմ պոլի ռամիկն կ'ըսէ՝ թէ սահմանքը չեն ճանչցուիր։ Կանաչորակ լուրջն սեաւ կամարաց տակ ներևոյթ կ'ըլլան, ատ և անդ տժգոյն լուսոյ շառայլով մը պայծառացած, որ կ'ահեցընէ խաւարին արհաւիրքը։ Ջահն դրան մերձաւոր կամարքը կը հրագունէ, կայլակահոս որմունքը կը ցոլացընէ, և խաւն 'ի խուռն կ'երևցընէ սեանց անծայրածիր գիծեր, որ յամենուստ կը խափանեն հայեցուածը, իբրև ծառոց բուներ՝ ընտցեալ թանձրախիտ անտառի մը մէջ։ Ի հեշտութենէ զարհուրանաց ձգեալ երևակայութիւնն կը խոյանայ այն գեղեզմանական կամարասանց կարգաց մէջ, սաւառնելով չարաչուք ջրոց վրայէն, և կը մոլորի անթիւ սեանց մէջ թաքկացուցիչ անեղր պտոյտներով, մինչդեռ թարգմանի մը մեղմ ձայնն կը պատմէ անձի մը երկիւղալից վէպքը, որ սահմանքը յայտնելու համար դիմագրաւեց այն գեղեմափորին մէջ նաւակի մը վրայ, և շատ ժամերէ ետքը դարձաւ յետս, յուսահատաբար թիավարելով, այլագունեալ դիմքը և խոզանեալ հերովք, մինչդեռ հեռաւոր կամարքն կը հնչեցընէին զբարձրաբերբեկ ծիծաղս և զսուր սուլմունս. և այլոց՝ որ ալ չդարձան, որ ով գիտէ ինչ վախճան ունեցան, թերևս յիմարեալք յահափեստից, թերևս մեռեալ սովալուկ, թերևս ձգեալ վարելք զանխուլ հեղեղէ մը ծածանօթ անդնդոյ մը մէջ, շատ հեռի 'ի Պատմպոլէ, Աստուած գիտէ ուր։ Այս սգաւոր տեսիլն յանկարծածագ Աթ–մէյտանի հրապարակին մեծ

digitised by A.R.A.R.@

լուսոյն մէջ անհետ կ'ըլլայ, և յետ սա-
կաւ վայրկենից վերստին դեռնի տակ
կը գտնուիմ, Պին–պիր–տիրէքի ցամաք
ջրամբարին երկու հարիւր սեռնց մէջ,
ուր հարիւր յոյն գործաւորք մեռաքս կը
մնանեն, սուր ձայնով մը պատերազմա-
կան երգ մը նուագելով, ժժգոյն լուսոյ
ճառագայթով մը լուսաւորուած, որ կը
բեկանի կամարաց խաչաձև հատմանց
մէջ. և կ'իմանամ իմ գլխոյս վրայ անց-
նող կարաւանի մը խառնակ դրնդիւ-
նը։ Ցետոյ նորէն բացօթեայ սղն և ա-
րևուն լոյսն, և ապա դարձեալ մթու-
թիւնն, ուրիշ դարական կամարաց ներ-
քև, ուրիշ սեռնց կարգաց մէջ, դամ-
բարանի խաղաղութեան մը մէջ, խռո-
վեալ հեռաւոր ձայնից տակար հնչմանէ
մը. և այսպէս մինչև յերեկոյ, խորհրդ-
աւոր և մոայլոյզ պանդխտութիւն մը,
ուսկից եռքը երկայն ժամանակ կը
մնայ աչացս առվև ստորերկրեայ ընդ-
արձակ լճի մը պատկերն, յորում խո-
բասուզեալ ըլլայ յունական պետու-
թեան մայրաքաղաքն, և յորում Ստամ-
պօլ, գեղաձիծաղ և անզգոյշ, օր մ'ինքն
ալ անհետ պիտի ըլլայ։

Իւսկիւտար.

Բոլոր այս խաւարն Իւսկիւտարի մե-
ծապայծառ պատկերէն կը ցնդի։ Երբ
ամբոխաժողով նաւու մը վրայ Իւսկիւ-
տար կ'երթայինք, բարեկամս և ես միշտ
կը վիճէինք թէ արդեօք գեղեցկութեան
առաջնութիւնն այն ափանց կը վերա-
բերէր՝ թէ Ոսկեղջեր կրկին եղերաց։
Եռնք զԻսկիւտար վեր կը դասէր. ես,
զՍտամպօլ։ Այլ Իսկիւտար իրեն տես-
ւլեան յանկարծակի փոփոխութեամբք
կը սիրահարցընէր զիս, որովք կարծես
Աէ Ձուլէն առ նա մատեցողքը ծաղր
կ'ուզէ ընել։ Մարմարայի ծովէն նայե-
լով, ուրիշ բան չերևիր՝ բայց բլրոյ մը
վրայ տարածուած մեծ գեղ մը։ Ոսկեղ-
ջերէն նայելով՝ քաղաքի մը տեսիլը
կ'ընծայէ։ Սակայն երբ նաւն ասիա-
կան ափան ամենէն յառաջացեալ ծայ-
բին բոլորը պտըտելով, կ'երթայ ուղիղ
դէպ 'ի Նաւահանգիստն իւր, այն ա-
տեն կ'ընդլայնի և կը բարձրանայ քա-
ղաքիկն. չինիւք ծածկեալ բլուրք մի ըզ-
կնի միոյ դուրս կ'ելնեն. արուարձանք 'ի
հովտաց 'ի վեր երևին, և բարձանց վրայ
կը ճապաղին դաստակերտք. բոլորովին
տնակաք գեղերվնեալ ափունքն կը տա-
րածուի անծայրատեսակ. ահագին, շքե-
ղաճոխ, թատրոնական քաղաք մը, որ
չես հասկընար որ կողմէն կրնայ ծա-
ծուկ մնալ. իբրև մեծատարած վարա-
դուրի մ'ամփառնալուն՝ քանի մը վայր-
կենէն աչացդ դիմաց կ'ելնէ, և հօն ընդ-
արմացած կ'արձանացընէ իբրև թէ ըս-
պասելով որ դառնայ ներևոյթի ըլլա-
լու։ Կ'իմնես փայտեայ Նաւամատուցի
մը վրայ, Նաւաստեայ, ձիոյ վարձիչ-
ներու և թարգմանաց խառնակուտի մը
մէջ, և վեր կ'երթաս գլխաւոր ճանա-
պարհէն՝ որ կ'ելնէ մեզմով, վիշապա-
ձև, կարմիր և դեղին տնակաց մէջ, բա-
ղեղամբ և որթատերևով պատած, ի-
վացեալ դալարեզ պարտիզաց որմից
մէջ, բարձր ձողաբարձից ներքև, ընդ
հովանեաւ մեծամեծ սօսեաց՝ որ գոգ-
ցես ճամբան կը փակեն. կ'անցնիս տա-
ճիկ սրճարանաց առվնէն, լցեալ ասիա-
կան դատարկապորտներով, որ ընկող-
մանեալք կը ծխեն, չես գիտեր ուր սևե-
ռած աչքդ. կը հանդիպես այծից հօրա-
նաց, գիւղից ծանր կառաց՝ ձգեալք
ծաղկազարդ գլխով գոմէշներէ, ֆէ-
սով և փակեղամբ շինականք, մահմե-
տական սգակիր յուզարկաւորութիւնք,
և գիւղազգօս հանրամներու խմբիկք,
որ կը կրեն ծաղկանց փունջեր և ճիւ-
ղիկներ։ Թուի թէ ուրիշ Ստամպօլ մը
կը տեսնես, նուազ մեծաշուք, այլ քան
զեօթն բլրոցը զուարթալից և առոյգ։
Է իբրև գեղջկական մեծ քաղաք մը։
Ամեն կողմերէն հորդան կու տայ հօն
գիւղն։ Երկու կողմերին տաղաւարա-
ձև տնակաք ճամբայիկք, որ կ'իջնեն և
կ'ելնեն ձորերէ և բլուրներէ, և պար-
տիզաց և բանջարանոցաց մէջ կը կոր-
սուին։ Քաղաքին բարձր կողմերը գիւ-
ղի խորին խաղաղութիւնն կ'ուխտ. ցած
կողմերը կը զեռայ ծովու քաղաքաց

digitised by A.R.A.R.@

բաղմաղբաղ կեանքն. ատա և անդ բարձրացած մեծամեծ գինուորանոցներէն կ'ելնէ ազաղակաց, երդոց և թմբկաց խառնակ շառաչիւն մը, և հազարաւոր թռչնեակը ամայի նրբուղեաց մէջ կ'ոստոստեն։ Մեռելոյ յուղարկաւորութենէ մ'ետուէն երթալով, կ'ելնենք քաղաքէն, միջամուխ կ'ըլլանք 'ի հէյաակաւոր դերեզմանատեղին, կը մոլորինք բարձրաբերձ ասսեաց մեծ անտառի մը մէջ, որ 'ի միոյ կողմանէ կը տարածուի դէպ 'ի Մարմարայի ծովն և 'ի միւսոյն դէպ յՍկեղիւր, լեռնային ընդարձակ գետնի մը վրայ։ Մինչև աչքն ուր կը հասնի բոլոր չորս կողմն սպիտականիշ կ'երևին գերեզմանական վէմք, դէպադէպ, անսպառ գծիւք, թփուտից և վայրենի ծաղկանց մէջ, ուղեաց անեզր ցանցի մը մէջ, թանձրախիտ բնից մէջ, որ հազիւ կը թողուն տեսնել զհորիզոնը իբրև լուսափայլ և ալետատան հեռաւոր շաւիղ մը։ Կ'երթանք յառաջ, դիպուածով՝ նկարեալ և ոսկեզօծեալ քարկոթողաց մէջ՝ կանգնուք և տապալեալք, ընտանեաց գերեզմանաց վանդակաց մէջ, փաշաներու փոքր հոյակապ շիրմաց, ռամկին անկոփ սիւնակաց մէջ, հօս և հօն խամրեալ ծաղկանց փունջեր և գանկաց գագաթներ տեսնելով, որ խորխորեալ հողոյն մէջէն 'ի վեր կ'երևին. յամենուստանոճեաց մէջ ծածկուած աղաւնեաց մնչելը լսելով. և երթալով կարծես թէ անտառն կը լայնի, քարինք կը բողբոջին, ճանապարհք կը բաղմանան, լուսափայլ հորիզոնին շաւիղը կը հեռանայ, մեզի հետ ոտն առ ոտն մանհուն թագաւորութիւնն կը յառաջէ. և սկսանք միմեանց հարցընել թէ ինչպէս պիտի ազատինք անկէ, երբ յանկակալս լայնատարր ճանապարհի մը մէջ կ'ելնինք, որ զմեզ կը տանի Հայաստէր փաշայի բացօթեայ ընդարձակ դաշտագետնին մէջ, ուր մահմետական զինուորութիւնք կը խմբէին Ասիոյ պատերազմաց երթալու համար, և հօնկէ հայեցուածով մը կ'ընդգրկենք Մարմարայի ծովը, Ստամպօլ, Սկեղիւր բերանը, Գալատա և Բերա, թեթև կերպով քօղարկեալ առաւօտեան դողոր-շիէն և շնչարարիկ դոյներով ներկեալ, որ զարմանաց և ցնծութեան սարսուռ մը կ'ազդեն մեզ հանելնուս։

Պալատն Զըրաղանի.

Ուրիշ առաւօտ մը դրամկէյի կառքի մը մէջ գտնուեցանք, սեաւ հսկայաձև երկու ներքինեաց մէջ, որոց Ապտիւլ-Ազիզի բանակի ալակեզ մը յանձնուած էր՝ տանելու զմեզ յայցելութիւն Զըրաղանի կայսերական ապարանից, կառուցեալ Վոսփորի ափանց վրայ՝ Պէշիք-թաշի արուարձանին ստորոտը։ Կը յիշեմ հետաքրքրութեամբ և սոսկմամբ խառն կրած զգացմունքս՝ ծայրիւ աչացս նայելով քովս եղած ներքինւոյն, որ գրեթէ գլխով չափ ինձմէ բարձր էր, և ծնկան վրայ տարապայման ձեռք մը երկնցուցած էր. և ամէն անգամ որ կը դառնայի, կ'առնուի փերկամոդի իւղոյ թեթև անուշահոտութիւն մը, որ իրեն արքունականի պայծառ և ողորկ դէմատներէն կը բուրէր։ Երբ կառքն կեցաւ, ձեռքս գրպանս դրի քսակս առնլու համար. այլ ներքինւոյն երկայնաչափ ձեռքն երկաթէ ադցանի մը պէս բռնեց բազուկս, և իրեն խափշիկի մեծամեծ ակունքն իմոյս մէջ սեռեցան, իբր թէ ըսելու, — Քրիստոնեայ, այս նախատինքը ինձ մի՛ ըներ, ապա թէ ոչ ոսկերքդ կը խախտեմ։ — Ինչպէս արաբական փոքր դռան մ'առջև, ընթացանք երկայնաձիգ սրահ մը, ուր ընդ առաջ եկաւ մեզի նշանագրեստով ծառայից դունդ մը, և հողմեփներ հաղնելով, լայն սանդղէ մ'ելանք, որ կը հանէր արքունեաց սրահից մէջ։ Հօս կենաց պատրանք մը գտնելու համար, հարկ չեղաւ մեզի զարթուցանել պատմական յիշատակը. դեռ տակաւին ներմ էր օդն Ադրունեաց ընչով։ Թափլով և անդուսով ծառկուած լայնարձակ բազմոցքն, որ կը տարածուէին որմից երկայնութեամբ, ճիշդ անոնք էին՝ որոց վրայ քանի մ'օրինեակ առաջ Մեծ Իշխանին հարճքն բազմած էին։ Ցակաւին

digitised by A.R.A.R.@

փափկակեաց և պերճասէր կենաց թե-
թև բուրում մը կը լցնէր օդը։ Ան-
ցանք սրահից երկայն շրջանէ մը, դուռ-
դեալք եւրոպական և մաւրիտանացի
խառն ճարտարապետութեամբ մը, սը-
բաղնիքք և գեղեցիկք, տեսակ մը հոյ-
կապ պարզութեամբ՝ որ մեր ձայները
ցածցընել կուտար. մինչդեռ ներքինիք,
անիմաց մեկնութիւններ մռմռալով,
կը ցուցընէին մեզի մերթ անկիւն մը,
մերթ դուռ մը, զգուշաւոր շարժմամբ
մը, իբրև թէ խորհուրդ մ'ակնարկէին։
Դերպասէ վարագոյրք, հազարաւոր գոյ-
ներով օթոյք, միւսիսէն սեղանք, 'ի հա-
կառակ լուսի դրուած իւղանկարի պատ-
կերք, արաբական սիւնակներով բաժ-
նուած դրանց շթաքարէ չքնաղ կա-
մարք, բիւրեղի ծառոց նման ամենա-
բարձր ճրագարանք, որ մեր անցնելուն
ատեն շառաչալից կը զոնանջէին, հա-
զիւ տեսած՝ կը շրթոնուէին մեր յան-
կարծակիի եկած գատրներուն փա-
խուստական պատկերաց ետևէն երթա-
լու բոլորովին մտադիր երևակայութե-
մէջ։ Մ'իայն Սուլթանին բաղանեաց սը-
բարան աչաց առէջ մնացեր է, համակ
սպիտակափայլ կիճէ, քանդակեալ շը-
թաքարաձև, առկախեալ ծաղկաք, օգա-
յին զարդուք և նկարակերտութեամբք,
փափկութեամբ մը, որ ինչուան վախ կու-
տար փրցուելու ինկնալու՝ եթէ մատից
ծայրով դպչէիր անոնց։ Սրահից յօրի-
նուածութիւնն վեր 'ի վերոյ ինծի Ալ-
համպրան կը յիշեցընէր։ Խուճապաւ
կը քալէինք թաւարծի գորգոց վրայ,
առանց շառաչ հանելու, գոգցես գաղտ-
նաբար։ Երբեմն երբեմն ներքինի մը
լար մը կը քաշէր, կը բարձրանար կա-
նաչ նուարտան մը, և լայն պատուհա-
նէ մը կը տեսնէինք զվոսփոր, զԱսիա,
հազար նաւեր, մեծ լոյս մը. ապա 'ի
քթթթել ական ամենայն ինչ կը չքանար՝
թողլով կմեզ իբրև չանթէ մը շլացեալ։
Պատուհանէ մը անցողաբար տեսանք
փոքր պարտէզ մը, բարձր որմովք փա-
կուած, մաքուր, յարդարուն, վանական,
որ մէկ վայրկենի մէջ յայտնեց մեզի
սիրոյ և աղատութեան ծարաւի չքնաղ
կանանց հազար թագուն մելամաղձու-
թիւնս, և յանկարծուստ նուարտանին
ետև անհետ եղաւ։ Եւ սրահք բնաւ
չէին լմննար, և ամեն նոր դուռ տես-
նելուս, կ'երագէինք քայլը՝ նոր սրա-
հին մէջ անակնկալ ներկայանալու հա-
մար. այլ ալ չէր տեսնուեր և ոչ հան-
դերձի մը ստորոտն. հարճքն անյայտ
եղեր էին. ամենայն կողմ խոր լռու-
թիւն մը կ'ելլէր. զմեզ հետաքրքրու-
թեամբ յետս դարձընող շրջիւնն ու-
ղիղ բան չէր՝ բայց գիպակէ ծանր վա-
րագուրաց շրջիւնն, որ կ'ինկնէին դրան
ետեւն վրայ, և բիւրեղեայ ճրագարա-
նաց զոնանջն կը նեղացընէր զմեզ՝ իբրև
թէ բլար թագուցեալ գեղանոյ մը
ուժգնահնչակ ծիծաղն, որ զմեզ ծաղր
ընէր։ Եւ ուր ուրեմն տաղտկացանք այն
անվերջանալի երթալ գալէն այն լու-
նիսա արքունեաց, այն մեռեալ ճոխու-
թեանց մէջ, ամեն քայլին 'ի մեծամեծ
հայելեաց՝ ներքինեաց այն սեաւ կեր-
պարանաց, այն մտայոյզ սպասաւո-
րաց խոժոռ գնդին, և մեր թափառա-
կանաց երկու ապշեալ դիմաց անդրա-
գառնալը տեսնելով. և գոգցես վաղե-
լով ելանք, և մեծ հաճոյք մը զգացինք
բաց օդոյ մէջ գտնուելով, ողորմելի
տանց մէջ, թոփ–հանէի թաղին պա-
տատատուն և աղաղակաւոր խառնա-
զանճին մէջ։

Էյուպ.

Եւ ինչպէս մոռնամ Էյուպի գերեզ-
մանատեղին։ Իրիկուն մ'արևն մանելու
ժամանակ գնացինք հոն, և միշտ յիշողու-
թեանս մէջ մնաց, այնպէս ինչպէս որ
տեսայ զայն, լուսաւորեալ 'ի վերջին
ճառագայթից արեգական։ Թեթևա-
սահ նաւակ մը տարաւ զմեզ մինչև Ոս-
կեղջեր ծայրը, և ելանք կողմնակի գե-
բեզմաններ ունեցող արագընթաց ճա-
նապարհէ մը 'ի «սուրբ երկիրն» Օս-
մանեանց։ Այն ժամուն քանդակա-
գործք, որ օրուան մէջ քարկոթողաց
վրայ կ'աշխատին, և իրենց գոյաւոր
բաղխմամբքն ընդարձակ հանդատարա-

digitised by A.R.A.R.@

նը կը հնչեցընեն, արդէն մեկներ էին. տեղին ամայի էր։ Ցառաջ դնայինք, զգուշահայեաց, նայելով չորս կողմն թէ կ'երևէ արդեօք խիստ իմամի մը կամ տէրվիշի մը դէմքն, վասն զի ամեն նուիրական տեղերէն աւելի՝ հոն նեբրեալ է անսուրբ կեավուրի մը հետաքրքրութիւնն. այլ չտեսանք ոչ դլանձէն գլխարկ և ոչ փակեղ երկչոտութեամբ մը հասանք մինչև այն էյուպի խորհրդաւոր մզկիթը, որուն հազար անգամ միւս ափանց բլուրներէն և լեռկողմեր ամենայն ծոցերէն տեսեր էինք փայլակնացայտ գմբէթքը և թեթեթռիչ մինարէները։ Գալթին մէջ, ընդ հովանեաւ մեծ սօսւոյ մը, հովանոցաձև կ'ամբառնայ, կանթեղաց պսակով մը մշտնենաջպէս պայծառացեալ, հոյակապ տաքանն, որ կը փակէ Մարգարէին հուչականուն դրօշակրին մարմինը, Բիւզանդիոնի տակ առաջին մահմետականաց հետ մեռած, և յետ ութ դարուց այն ափանց վրայ թաղուած գտնուած ի Մէհէմմէտ աշխարհակալէ։ Մէհէմմէտ իրեն նուիրեց այն մզկիթը, յորում կ'երթան փատիշահք հանդիսաւոր Օսմանի տուրը կապելու. վասն զի այն՝ կոստանդնուպօլոյ սրբազոյն մզկիթն է, ինչպէս զայն պատող գերեզմանատեղին՝ գերեզմանատեղեաց սրբազնագոյնն։ Մզկիթին բոլորտիքը, ընդ ստուերաւ մեծամեծ ծառոց, կը բարձրանան Յուլթանուհեաց, վէզիրներու, Ուրբունեաց աւագորերոյ թիւրպէներ, ծաղկօք բոլորեալ, կիպարիսով և ոսկեայ արաբական զարդերով փոգփոզուն, և դրուագեալ չքեղ արձանագրութեամբ։ Մէկուսի կայ միւֆթիներուն յուղարկաւորութեան տաճարիկն, ուր թանկիւնի դմբեթով մը ծածկուած, յորում կը հանդչին մեծ քահանայք՝ եղեալք ի մեծ սեաւ պաղպաղունս, ուր նեղով ի վերոյ բեհեղեայ ամենաբարձր ապարօշներ։ Գերեզմանաց քաղաք մ'է, բոլորովին ապիտակ և հովանաւոր, և թագաւորաբար ազնուական, որ կրօնական սիրութեան հետ միանգամայն կը ընէ չգիտեմ ինչպիսի աշխարհային ակնածութեան զդացում մը, իբրև ազնուապետական թաղ մը, անմահունչ՝ մեծաշուք լռութեամբ մը։ Ի՝անդնիս սպիտակ որմոց և ամենանուրբ վանդակաց մէջէն. յորոց սդաւոր պարտիզաց կանաչութիւնն պսակաձև և ցցունազարդ կ'ելնէ, և կ'երկայնին կակիպոյց, կաղնեաց և մրտենեաց սաղարթքն, և ոսկեգոծ երկաթէ ժանեկաց մէջէն, որ թիւրպէներուն կամարաւոր պատուհանքը կը փակեն, քաղդր լուսով մը ներսը կը տեսնուին կճեայ հոյակապ չիրիկներն, նկարեալք ի կանանչ ցողմանց ծառոց։ Զկայ ուրիշ տեղ ի Յոտամպոլ՝ որ մահմետական արուեստն այսպէս շնորհաշուք կերպով լայնանէ մահուան պատկերը ազնուացընելու, և առանց զարհուրանաց մտածութիւնը քեզ հոն յառեալ տալու։ Գերեզմանատուն մը, արքունիք մը, բուրաստան մը, պանթէոն մ'է, պատարուն մելամաղձութեամբ և շնորհօք, որ շրթանց վրայ կը բերէ միանգամայն աղօթք և ժպիտ։ Եւ ամեն կողմէն չորս դին կը տարածուին հանգստատունք, գարական նոճուոլք հովանաւորեալ, մանուածապատ շուշաղ ընդմիջեալ, սպիտակ՝ ի քարկոփոլոյց բազմութենէն, որ թուի թէ զառ ի վայրէն վար կը թռչալին երթալու ընկրկելու ջրոց մէջ, և դամ կը խնդին ճանապարհաց երկայնութեամբ՝ ոգւոց անցնելը տեսնելու համար։ Եւ լայնելով թփոց ճիւղերը՝ հազար նեսմ՝ թռչունոցներէ կը տեսնուի յաջակողմն խառն ի խուռն Յոտամպոլ հեռաւոր, որ կ'ընծայէ մին ի միւսոյն անջատած կապուտակային քաղաքաց կարգի մը տեսիլը. վարը՝ Ոսկեղջիւրն, որու վրայ կը փայլատակէ արեգական վերջին ճաճանչն. դիմացը՝ Սիւտլիճէի, Հալեճի-Օղլուի, Փիրի-Փաշայի, Խաս-քէօյի արուարձանքն, և աւելի հեռու՝ Գասբմի մեծ թաղն և Կալատայի աղօտ կիսանկարն, թրթռուն և նուազեալ գունոց անսահման քաղցրութեան մը մէջ անհետ եղած, որ այս աշխարհիս իր չեն երևիր։

digitised by A.R.A.R.@

Եէնիչէրեաց թանգարանն.

Այս ամենայն կը չքանայ, և կը շըրջագայիմ երկայնաձիգ մերկ սենեկաց մէջ, խոժոռագէմ անշարժ կերպարանաց կրկին խմբից մէջ, որք որմից թեքագեալ դիակունք կը կարծուին։ Զեմ յիշեր որ երբեք այսպէս սաստիկ քամեալս զդացում մ'ունեցած ըլլամ, բայց 'ի Լոնտրա, Դիւսսոյի թանգարանին վերջին սրահին մէջ, ուր մարմրեան մէջ կը տեսնուին Անգլիոյ ահեղագոյն սպանութիւնքն։ Է իբրև ուրուականաց թանգարան մը, կամ մանաւանդ բաց գերեզման մը, յորում մուտիացեալ կը գտնուին այն փառաւոր, այլանդակ և կատաղի հին Ցաճկաստանին համբաւատենչ հոյակապ անձինքն, որոնք միայն ծերոց յիշողութեան և բանաստեղծից երևակայութեան մէջ կը մնան։ Հարիւրաւոր գունաւորեալ փայտեղէն մեծամեծ պատկերք են, հին տարազ հագած, կանգունք, խիստ և խրոխտ կեցուածով, բարձրիգլուխ, փեռեկեալ աչք, ձեռքերնին երախակալաց վրայ, որ կարծես թէ ակնարկութեան մը կը սպասեն սուրը մերկացընելու և արիւն թափելու, ինչպէս վաղեմի յայոց ժամանակները։ Նախ փատիշահին տունն կու գայ. մեծ ներքինին, մեծ վէզիրն, միւֆթին, սենեկապանք և մեծամեծ սպայք, գլուխնին ծածկած բազմագոյն փակեղներով, բրգաձև, գնտաձև, քառակուսի, անհեթեթ, Նորանչան, շողշողուն գունիւք դիպակաց պարեգօտներով, ասղնեգործութեամբք ծածկուած, կարմիր կերպասէ և սպիտակ կերպասէ պատմուճանաք, մէջքերնին զարդած գազմիրէ գօտովք, ոսկեհուռն հանդերձիւք, ոսկեղէն և արծաթեղէն տախտակաք լանջերնին ծածկած, իշխանական զինուք, այլանդակ և ահեղաշուք խրտուիլակաց երկու երկայն գիծք, որ զարմանալի կերպով հին օսմանեան արքունեաց էութիւնը կը մերկանան, անամոթաբար պերճալի և խժդժաձայր գոռոզ։ Ապա կու գան մանկլաւիկք, որ կը կրեն փատիշահին մուշտակքը, ապարշոյշ, աթոռք, սուսերք։ Յետոյ դրանց և պարտիզագ պահապանքն, Յուլթանին անձնապահքն, սեաւ ներքինիքն և սպիտակ ներքինիքն, մղաց և կոռոց դիմաք, փոյլակնոչոյք, ցցունազարդք, գլուխնին ծածկած պարսկական խոյրերով և մետաղական սաղաւարտիւք, ծիրանեգոյն գդակաք, օտարոտի փակեղներով, մահկանաձև, կոնաձև, շրջուն բրգաձև. զինեալք պողվատէ լախտիւք, դաշունաք և խարաղանաք, իբրև մարդապանաց և դահճաց ջոկիր մը։ և մին արհամարհանաք յօդս կը նայի, այլ ոմն կը կրճէ ատամունքը, երրորդ մը արեան ծարաւի կրկին աչկունք յակնակապճէն դուրս կը ցոկէ, չորրորդ մը սատանայական երդիծանութեան դիրքով մը կը ծիծաղի։ Եւ 'ի վերջոյ, եէնիչէրեաց գունդն, իր էմին պապա սուրբ պաշտպանովն, կմախացեալ, սպիտակ պատմուճան մը հագած, և ամեն ատիճանէ սպայք՝ խոհանոցին զանազան պաշտօներէն նշանակեալք, և ամեն դասու զինուորք՝ ամենայն խորհրդական նշանակաք և ամենայն նշանագրեստիւք, այն Մահմուտի երկաթաձիգ ռումբներէն բնաջինջ եղած ժպիրն բանակին։ Եւ հօս զգեստուց նորօրինակ և մանկական այլանդակութիւնն, խառն ընդ արհաւիրս յիշատակաց, վայրենի խեղկատակութեան մը տպաւորութիւնը կ'ընէ։ Նկարչի մը ամենէն աւելի արձակերասան երևակայութիւնն չի յաջողիր երբեք ձևայընել այսպիսի յիմար հանդերձից խառնակութիւն մը, թագաւորաց, քահանայից, աւագակաց, հացկատակաց։ «Զրկիրք, արգանակաց պատրաստիչք, աւագ խոհակերք, խոհակերի մանկանց գլխաւորք», մանանական սպասարհարկութեանց պաշտամմամբ զինուորք, կը յաջորդեն երկայն գծիւք, իրենց փակեղաց մէջ աւելներով և զրգալիւք, պատմուճանաց կախած բոժոժներով, տիկերով, ապստամբութեանց նշանատուր հաչակաւոր սաներով, մորթէ մեծ խոյրերով, ծոծ-

digitised by A.R.A.R.@

բակնին՝ միջոց վրայ մեռելահմայից վե-
բարկուաց պէս առկախեալ լայն կտա-
ւազ, քանդակուածոյ մետաղէ սկաւա-
ռակաց լայն գօտուովք, հսկայաձև վա-
զակաւորաք, խեցգետնի աչքք, յաղթ
իրանք, ծաղրաձութեան, սպառնա-
լեաց և թշնամանաց կեցուածքով յար-
մարեալ երեսք։ Ի մերջէ կու գան Պա-
լատան համբիք, իրենց ձեռքն կերպա-
սէ լարն, և թղուկք և խեղկատակք, ի-
ժացեալ ապուշից գարշելի դիմաք, և ի-
րենց դլխոյն վրայ ծաղրալից պսակներ։
Մեծամեծ ապակափեղկքն, յորս բոլոր
այս ամբոխն փակուած է, կու տան
տեղւոյն տեսակ մ՝անդամահատական
թանգարանի կերպարանք, զոր աւելի
ճշմարտանման կ՝ընէ արձանաց դիա-
կան երեսոյթն և երբեմն սոսկմամբ ե-
բեսք ծամածռել կու տայ։ Դայրն հաս-
նելով, կարծես թէ հին պալատան սրա-
հէ մ՝անցանք, բովանդակ Աբքունեաց
մեջէն, փառիչահին սպառնալեաց ա-
ղաղակէ մը յերկիւղէ սառուցեալք. և
եղնելով և Աթ–մէյտանի վրայ հանդի-
պելով սևազգեստ փաչաներու և հա-
մեստութեամբ զուաքի հագուած նիզա-
մներու, ահ, ինչպէս մեր օրերուն Ցաճ-
կաստանն հեզ և սիրելի կ՝երևի։

Թիւրպէներն.

Եւ նաև անտի անընդիմադարձաբար
կը դառնամ գերեզմանաց մեջ, տաճ-
կական քաղաքին մեջ սփռուած կայ-
սերական անթիվ թիւրպէներու մեջ,
որ պիտի ՇԱՍ միշտ՝ի յիշողութեան ի-
մում՝ իբրև մահմետական արուեստին և
փիլիսոփայութեան ազնուագոյն յայտ-
արարութիւններն մին։ Ֆէրման մը
մեզի բանալ տուաւ՝ նախնորդիլ Մահ-
մուտի թիւրպէն, Աթ–մէյտանէն քիչ
հեռու չմնուած, վարդիւք և յասմիկ-
ներով լցուած պարտիզի մը մեջ։ Վեց-
անկիւնի գեղեցիկ տաճարիկ մ՝է, սպի-
տակ կիճէ, կապարապատ գմբեթով մը
ծածկուած, վերամբարձեալ յոնիական
խարսխոք և լուսաւորեալ ոսկեզօծ վան-
ձակաք փակուած եօթն պատուհանե-
րէ, յորոց ոմանք Ստամպօլի դլխաւոր
ճանապարհաց վրայ կը նային։ Ներքին
որմունքն զարդարեալ են խորաքան-
դակաք և գրուագեալ կերպասէ և դի-
պակէ օթոցաք։ Ի միջոցին կ՝ամբառնայ
գագաթն՝ պարսկական ամենագեղ շա-
լերով ծածկուած. և կայ վրան ֆէսն,
նշանակ նորաձևութեան, ադամանդով
շողշողուն ցցունիւք, և բոլորտիքը բա-
ղեգեղ վանդակասիւն մը, սատափով
ագուցիկ, որ արծաթէ չորս մեծ ճրա-
գաններ կը պարփակէ։ Որմոց երկայ-
նութեամբ կան եօթն սուլթանուհեաց
դագաղքն։ Ցատակը ամենանուրբ սը-
փրիդներով և գունագոյն գորգերով
ծածկուած է։ Ճոխ գրակալաց վրայ
սատ և անդ կը փայլին թանկագին ղու-
բաններ, բոլոր ծածկուած ամենամանր
արաբ տառերով, Մահմուտի ձեռաք
գծագրեալ։ Դահ եղնելէն առաջ, երբ
կ՝ապրէր հին պալատան մէջ բանտար-
կեալ, ինքն համբերութեամբ օրինա-
կեց այն կտաւեայ կտորին վրայ Ղու-
բանին մեծ մաս մը, և մեռնելու ատեն
պատուիրեց որ այն իրեն երիտասար-
դական յիշատակը իր գերեզմանին վը-
բայ դրուի։ Թիւրպէին ներսէն ոսկե-
զօծ վանդակաց մէջէն պարտիզին կա-
նաչը կը տեսնես և վարդից հոտը կ՝առ-
նուս. կենդանի լոյս մը բոլոր տաճարիկը
կը պայծառացնէ. քաղաքին բոլոր շա-
ռաչքն կը հնչեն հօն իբրև բաց կամա-
րակապի մը տակ. ճամբէն կանչք և
մանկունք պատուհաններէն կը նային և
աղօթք մը կը մրմնջեն։ Այս ամեն բա-
նին մէջ նախնական և անուշակ ինչ մը
կայ, որ կը գորովէ զսիրտ։ Կարծես իմն
ոչ թէ դիակն, այլ Սուլթանին հոգին
փակուած ըլլայ այն որմոց մէջ, և թէ
կը տեսնէ և կը լսէ իր ժողովուրդը՝ որ
կ՝անցնի և զինքը կ՝ողջունէ։ Մեռնելով,
ինքն ուրիշ բան չըրաւ՝ բայց փոխել
զհովանոցը։ Պալատան հովանոցներէն
եկաւ այս միւսոյն մէջ, ոչ ինչ նուազ
ծիծաղկոտ, և միշտ արևուն լուսոյն,
Ստամպօլի կենաց զդրդման, իր որդւոց
մէջ է, մանաւանդ թէ անոնց աւելի
մերձաւոր, ճանապարհին ծայրը, ամե-

digitised by A.R.A.R.@

նուն աչաց տակ, և դեռ փոդիոդուն ցցունքը կը ցուցընէ ժողովրդեան՝ ինչպէս երբ 'ի մկկիթի կ'երթար, լի կենդանութեամբ և փառքի, Պետութեան բարեբաղդութեան համար աղօթելու։ Եւ դրեթէ այսպէս են բոլոր մեկալ թիւրպէներն, Ահմէտին, Պայազիտին, որ իր գլուխը իրեն զգեստներուն և իր մուճակաց ժողովեալ փոշով յօրինուած աղիւսոյ մը վրայ կը հանգչեցընէ. Սիւլէյմանին, Մուսդաֆային և Գ Սելիմին, Ալպտիւլ-Համիտին, Ռոզելլանա սուլթանուհւոյն։ Պպտակ կիճէ և պրոփիւրէ խարխազ վերամբարձեալ տաճարիկներ են, սաթով և սատափով չողչողուն. որոց ոմանց մէջ գմբեթին ծակէ մը անձրևային ջուրն կ'ինչնէ, թաւիշք և ժանեակք ծածկուած դագաղաց չորս կողմի եղած ծալիկները և խոտերը թանալու. և 'ի կամարաց կը կախուին ջայլամի ձուք և ոսկեզօծ կանթելք, որ կը լուսաւորեն իշխանաց շիրիմքը, պսակաձև հայրենի գերեզմանին բոլորտիքը դրուած, վրանին թաշկինակներ՝ որ ծառայեցին զիրենք խեղդելու մանուկ կամ պատանեկիկ. թերևս զարթուցանելու 'ի հաւատացեալս՝ զոհից վրայ գթալով՝ այն եղերանց ճանկատագրական կարևորութեան զգացումը։ Եւ կը յիշեմ, որ անդադար այն մեռելոց պատկերքը տեսնելով, կը սկըսէի զգալ յիս իբրև խորհրդոյ և սրբի հպատակութեան սկիզբ մը առ ամպարիշտ իրաւունս Տէրութեան, որ զայն կը վաւերացընէր. ինչպէս ամէն քայլին անդադար գտնելով 'ի մկկիթս, յաղբիւրս, թիւրպէներու մէջ, 'ի հազար պատկերս՝ մորգու մը անունը յիշատակեալ և փառաւորեալ, բայաբձակ և վեհագոյն իշխանութիւն մը, 'ի ներքս յիս կը սկսէր բան մը նուաճիլ. ինչպէս անդադար թափառելով ընդ ստուերաւ դերեզմանատանց և սեռեռելով միտքս 'ի գերեզմանս, կը սկսէի խորհրդածել մահուան վրայ զոգցես խաղաղ նոր տեսութեամբ մը. կենաց աւելի անդորր և աւելի անհոգ զգացում մը կրել. թողուլ քանել զիս չգիտեմ ինչպիսի պարապորդ իմաստասիրութեան, խորհրդոյ անահման թափառանաց մը, հոգւոյ նոր վիճակի մը, յորում թուէր ինձ թէ լուագոյն բանն՝ զժամանակը խաղաղութեամբ երազելով անցընելն էր, և թողուլ որ ինչ որ գրուած է՝ կատարուի։ Եւ տաղտկանաց և ընդդիմութեան յանկարծական զգացում մը կ'իմանայի, երբ այն հանդարտ և անդորր ուրուաց մէջ մեր աշխատասխոնջ քաղաքաց, մեր մթին եկեղեցեաց, մեր որմած և ամայաբնակ դերեզմանատեղեաց պատկերք առջևս կու գային։

Տէրվիշք.

Եւ նաև տէրվիշք՝ այն վերջին աւուրց պատկերաց մէջ դիմացէս կ'անցնին, և են Մէվլէվի տէրվիշք, (երկոտասան կարգաց մէջէն երևելագոյնն), որ ամենածանօթ թէքքէ մ'ունին Բերայի ճանապարհին մէջ։ Հոն գնացի՝ պատրաստուած լուսափայլ օրոց երեսներ տեսնելու, յափշտակեալս 'ի հնաշխարհիկ նկատութիւնս։ Ա.ալ մեծապէս պատրեցայ։ Եղուկ, տէրվիշներու մէջ ալ հաւատոյ բոցն «լիպանէ զորձայն ազազուն»։ Ազատուածային պարն ինծի ուրիշ բան չերևցաւ՝ բայց թատրոնական ցուրտ հանդէս մը։ Անտարակոյս հետաքրքրական է տեսնելն, երբ մի զհետ միոյ բոլորշի մկկիթին մէջ կը մտնեն, թուխ մեծ վերարկուի մը մէջ փաթթուած, գըլխակոր, աքօղեալ բազկք, խժդժական, միադիմի և քաղցրաբարբառ երաժշտութեան մը հետ, որ կը նմանի հոգւոյ մռնչման՝ Իւսկիւտարի գերեզմատանց նոճեաց մէջ, և բաց աչք երազել կուտայ. և երբ կը պարագային չորս կողմը, և երկու երկու Միրապի դիմաց կը խոնարհին, մեծավայելուչ և նուազկոտ շարժուածով մը... ։ Նոյնպէս գեղեցիկ տեսարան մ'է և այն, երբ աչխոյժ շարժմամբ մը վերարկուն գետին կը նետեն, և ամենքն սպիտակ հագուած կ'երևին, բրդեայ երկայն շրջազգեստիկով, և սիրողաբար բանալով բազուկնին և յեսու շրջելով գլուխնին, մի զկնի միոյ իրենք

digitised by A.R.A.R.@

զիրենք պտուտից կը թողուն, իբրև թէ անտեսանելի ձեռանէ մը նետուած ըլլային. և երբ ամէնքը միաբան կը պտըտին մէկէն մէկ տեղն, իրենց մէջ հաւասար տարակացութեամբ, առանց մեղ մ'ալ հեռանալու իրենց տեղէն, իբրև ինքնաշարժ մեքենայք առանցքի մը վրայ, սպիտակք, թեթեւք, արագագոյնք, ուռուցիկ և ալեւոտուն շրջանգ դեստիկով, և թերափակ աչք. և երբ կը թաւալին ամէնքը մէկտեղ, իբրև յերկիր կործանեալք 'ի գերմարդկային տեսլենէ, յատակին վրայ հեղձուցանելով Ալլահի որոտաձայն աղաղակը. և երբ նորէն կը սկսին խոնարհիլ և իրարու ձեռք համբուրել, և պարագայիլ, պատին քովէն, ընդ մէջ ճեմից և պարի վայելուչ քայլով մը։ Ալլ վերացմունք, յափշտակութիւնք, այլափոխիկ գէպ, զոր այնքան ճանապարհորդք տեսան և նկարագրեցին, ես չտեսայ զոյնս։ Ցեսայ միայն թեթեւաշարժ և անխոնջ կաքարիւներ, որ ծայրագոյն անտարբերութեամբ իրենց պտուտքը կ'ընէին։ Ցեսայ մանաւանդ զսպեալ ծիծաղներ..... իմ վրաս աւելի ազդեցութիւն ընող բանն եղաւ այն բոլոր մարդկանց մէջ, յորս ամէնայն հասակէ և ամէնայն կերպարանքէ կային, շարժուածոց և կեցուածոց շնորհք մը և վայելչութիւն մը տեսնելն, որուն կրնանն խանձիլ մեր դահլճային կաքաւիւներէն շատերը. և յայտնի է որ այս՝ արեւելեան ցեպից բնական տուրք մ'է, յառաջ եկեալ 'ի մասնաւոր ինչ կազմութենէ մարմնոյ։ Նէ ուրիշ օր մը լաւագոյն ևս դիտեցի զայն, յորում կրցայ թէքքէի սենեկիկի մը մէջ մտնել, և մօտէն տեսնել տէրվիշ մը՝ որ հանգիստն կը պատրաստուէր։ Ամնմրուս, բարձրահասակ և թեթեւանդամ երիտասարդ մ'էր, կանայի դիմք։ Սպիտակ պարեգօտը կը զպէր կողերը, հայելւոյն մէջ նայելով. գէպ 'ի մեզի կը դառնար և կը ծիծաղէր. նուրբ մէկքը կը չշաւիէր ձեռքդն. կը յարգարէր հապճեպով, բայց վայելչութեամբ և արուեստաւորի աչքով մը, զդեստուն բոլոր մասունքը. ինչպէս տիկին մը՝ որ իր վարսից հիւսուրուն վերջին ձեռքը տայ. և 'ի յետուստ տեսնելով, այն հանդերձին ստորոտով, յիրաւի կ'ընծայէր պարի համար հագուած գեղեցկիկրան աղջկան մը կիսանկարը, որ հայելւոյն դատաստանը հարցնէր.... Եւ տէրվիշ մ'էր։ Ո'հ, արդարև, օտարոտի իրք, ինչպէս կ'ըսէր Ցեստեմնա առ. Օդելլոյ։

Զամբրեա.

Ալ իմ յետին յիշատակաց գեղեցկագոյնն՝ Զամբրճա լերին գագաթն է, որ կ'ամփաունայ իւսկիւտարի թիկունքը։ Հնոկէ քաղաքին տուի իմ վերջին ողջոյնս, և իմ կոստանդնուպօլսոյ մեծամեծ անրջոցս վերջինն և չքեղագոյնն եղաւ։ Մառախլապատ օդով մը ցորեկ ըլլալուն պէս գնացինք յիւսկիւտար։ Դեռ մառախուղն կար, երբ հասանք լերին ծայրը. այլ երկինքն կը յուսացընէր պայծառ օր մը։ Մեր ներքեւը ամենայն ինչ քօղարկեալ էր։ Կորանչան տեսարան մ'էր։ Հորիզոնական գորշագոյն ահագին վարագոյր մը, որուն ամբողջ կ'իշխէինք մենք հայեցուածով, կը ծածկէր գիւսկիւտար, զլոսիոր, զՊսկեղջիւր, զողջոյն կոստանդնուպօլիս։ Մեծ քաղաքն բոլոր իր արուարձաններովն և բոլոր իր նաւահանգիստներովն կարծես թէ անհետացեալ եղած էր։ Էր իբրև միգի ծով մը, ուսկից միայն կղզոյ մը պէս Զամբրճայի գագաթն կ'ելնէր։ Եւ մենք այն գորշագոյն ծովուն կը նայէինք, երևակայելով երկու խեղճ պանդուխտներ ըլլալ, փոքր Ասիոյ խորեն եկած, և արշալուսէն առաջ հօն հասած, այն մեծ միգին վրայ, առանց գիտնալու որ մեր ներքևն ըլլայ օսմանեան Պետութեան մեծ մայրաքաղաքն, և մեծ հանդիսք մը կ'իմանայի՝ հետամուտ ըլլալու մոռք՝ ափշութեան և զարմացման աճեցուն զգացման, զոր այն պանդուխտքն կրած պիտի ըլլան՝ տեսնելով տակաւ գորշագոյն ահագին քօղոյն տակ, արևուն ելնելէն ետքը, հիսաքանչ և անակնկալ քաղաքին յերևան գալը։

digitised by A.R.A.R.@

եւ արդարև քիչ եաքը, մի և նոյն ժամանակ զանազան տեղ թանձրախիտ քօղն սկսաւ պատառուտիլ։ Հօս և հոն այն մխրագոյն լայն մակերևութիւն վըրայ սկսան տեսնուիլ իբրև չատ մը քաղաքի սկիզբներ, որ կղզեակը կը կարծուէին. միւսին մէջ լողացող քաղաքաց արշիպեղագոս մը, և ճապաղեալք'ի մեծ հեռատան. իւսկիւտարի ծայրն, Ստամբոլի բլրոց եօթն գագաթունք, Բերայի արտեւանն, Վոսփորսի եւրոպական ափանց բարձրադոյն արուարձանքն, Գասսըմ փաշայի կատարն, Ոսկեղջեր բացագոյն արուարձանաց շլմոթ բան մը, 'ի վայր դէպ յէյուպ և խաս-Քէյ. քըսան փոքր կոստանդնուպոլիք, վարդափթիթք և օգաստաղաք, ցցուեալք անհամար սպիտակ, կանաչ և արծաթի ծայրերով։ Ապա իւրաքանչիւրն սկսաւ լայնիլ և ընդլայնիլ, իբրև թէ բարձրանար յուշիկ այն դուրշային ծովուն վրայ, և յամենուստ կու գային 'ի վեր երեսը՝ հազարաւոր տանիք, գմբէթք, աշտարակք, մինարէք, որ կարծես թէ կը խնդէին, կամ խուճապաւ կը շարուէին, որպէս զի արեգակն իրենց վըրայ հանեալէն առաջ իւրաքանչիւրն իր տեղը գտնուի։ Ադրէն կը տեսնուէր տակը բոլոր իւսկիւտար. դիմացը՝ գրեթէ բոլոր Ստամբոլ. Ոսկեղջեր միւս եզերին վրայ, ամենայն արուարձանաց բարձրադոյն մասն՝ որ 'ի կալաղայէ կը ձգուին մինչև ցՆոյշ ջուրս. և Վոսփորի եւրոպական ափանց վրայ, Թոփ-Հանէ, Ֆընտըգլը, Տօլմա Պահճէ, Պէշիք-Թաշ, և յառաջ ևս, աչք կարելու չափ, չինաւծոց ամբաւ սանդուղք, և աւելի ևս հեռաւոր քաղաքք, որ միայն ճակատին կը ցուցընէին, բստոյ քաղցրածաւալ կարմրութեամբ մը արշալուսէն սրբակեալք։ Բայց Ոսկեղջիւր, Վոսփոր, Ծովն դեռ ծածկուած էին։ Պանդուխտքն անկէ բան մը պիտի չհասկընային։ Կըրնային պատկերել 'ի մտի՝ որ անհուն քաղաքն կառուցեալ ըլլայ կրկին խարտիտ ձորոց մէջ, և մշանթենապէս միգապատք, յորոց մին մնէ միւսոյն մէջ, և միմեանց հարցընեն՝ թէ այն երկու խորհրդաւոր անդնդոց մէջ մինչ կըրնայ ծածկուած ըլլալ։ Բայց ահաւասիկ քանի մը վայրկենէն վերջին միգին գորշագոյնը կը պայծառանայ — կապտագոյն կ'ըլլայ — կը փայլի — ջուր է — նաւակայան մ'է — նեղուց մը — ծով մը — երկու ծովք, բոլոր կոստանդնուպոլիսն հոն է, խորասուզեալ լուսոյ, կապուտոյ և կանաչի ովկիանոսի մը մէջ, որ կարծես թէ ժամ մ'առաջ ստեղծուած է։ Ո՜հ, այն ժամուն բաւական չէ միայն նըկատել այն գեղեցկութիւնը 'ի հազար բարձրութեանց, բաւական չէ հետախուզել զայն իրեն ամեն առանձինն հանգամանաց մէջ, և հազար կերպերով յայտնել իր հիացումը և զարմանքը. այլ պէտք է նաև աղաղակ հանել և ձայն արձրկել. և մտածելով որ յետ սակաւ աւուրց ամենայն ինչ 'ի մեր աչաց պիտի անհետանայ, այլ ևս ուրիշ բան չըլլալով բայց խառնակ յիշատակ մը, որ այն մառախղոյ առագաստն ալ ընաւ պիտի չի վերնայ, որ այն է ամեն բանի վերջին ողոյնը տալու վայրկեանն . . . . . չգիտեմ՝ . . . . թիւի թէ յաքսոր պիտի երթամ, և թէ մեր կենաց հորիզոնն կը մթագնի։

Եւ սակայն վերջին օրերը ձանձրութիւնն տիրեց մեր վրայ նաև 'ի կոստանդնուպոլիս։ Խոնջ միտքը կը խուսափէր 'ի նոր տպաւորութեանց։ Կ'անցնէինք կամ'ջէն առանց յետս դառնալու։ Ամենայն ինչ մեզ միագոյն կ'երևէր։ Առանց նպատակի կը պտըտէինք, յօրանջելով, դեղեկոտ թափառակաց նման։ Երկոյն ժամեր կ'անցընէինք տաճկական սրճարանի մը մէջ, մեր աչքը կառուցած կոպիճներուն վրայ, կամ պանդոկին պատուհանը՝ հանդիպակաց տանեաց վրայ թափառող կատաղոյ նայելու։ Արևելքէն յաղեալ էինք. ամփոփման և աշխատութեան բռնագոյն պիտոյք մը կը սկսէինք զգալ։ Ապա անձրևեց երկու օր. Կոստանդնուպոլիս ահագին եղտիւր մը փոխուեցաւ և դարձաւ բոլորովին գորշագոյն։ Եւ այն վերջին հալուածն եղաւ։ Դառնացանք, կը

digitised by A.R.A.R.@

նախատէ՛ինք զքաղաքը, լիրբ, ժպիրհ եղանք, լի եւրոպական պահանջանաք և պարծենկոտութեամբ։ Ո՛վ կրնար մեզի մեր հասած օրը ըսել զայն։ Եւ որ կէտի հասանք։ Հասանք ինչուան հանդէս ընելու այն օրն՝ յորում ելանք աւարիական Լոյտի պաշտօնարանէն՝ ընդ վառնա և ընդ Դանուբ նաւարկութեան երկու տոմսակաը։ Այլ այն հանդիսին մէջ սեաւ կէտ մը կար, և էր մեր բեբայի բարի բարեկամներէն բաժնուելուն տհաճութիւնն, որոնց հետ բոլոր այն իրիկունները խանդաղատանաք անցուցինք։ Ի՞նչ տխուր բան է այս միշտ ողջոյն ըսելու պարտքն, և միշտ խորտակել կապանս, և ամէն տեղ թողուլ իր սրտէն փշուր մը։ Ցկայ ուրեմն արդեաք աշխարհիս մէկ կողմն ալ դիւթիչ գաւառան մը, որով ես կարենամ օր մը, 'ի սահմանեալ ժամու, զամենքն 'ի միասին յերևան ածել՝ կահաւորեալ մեծ սեղանոյ մը բոլորտիքը՝ ընդ չորս հողմս երկրի սփռուած իմ՝ բոլոր բարի բարեկամներս, զքեզ 'ի Կոստանդնուպօլսոյ, Յանդորոյ, զքեզ յափանց Ափրիկէի, Սէլամ. զքեզ 'ի լեռնադաշտակաց Հոլանտայի, Դէն Պրինք. զքեզ, Սեկովիա, 'ի Կուատալկիվիրէ, և զքեզ, Սաամեսրա, 'ի Դակոյէ, աղաղակելու համար որ զձեզ միշտ պիտի սիրեմ։ Ա՛հաղ, գաւառանն չի գտնուիր, և 'ի նոյն կ'անցնին տարիներն և յոյսք 'ի բաց կը թռչին։

Կը շարունակուի.

Նորատաքանչ ժամացոյց մը։ — Ի Պոսքն՝ Գարլիսդ անուամբ ժամացուցացարդ մը, ներկայացուց այն քաղաքին մէջ իրմէ շինուած ժամացոյց մը, որ առաւօտը մասնաւոր 'ի կանոնաւորեալ ժամու, կ'ողջունէ արշալոյսը զըւարթ ձայնով, ապա երեք անգամ թնդանօթ մը կ'արձրկէ, և կը ներկայացընէ մարդ մը որ կը խաղայ զանազան գունտերով որոնք օդոյն փոփոխութիւնքը կը ցուցընեն։ Եւ յիրաւի ոսկեղէն գունտն կ'իմացընէ պարզ օդը, արծաթեղէնն՝ մէգը և սեաւն՝ անձրևը։ Ցեռոյ կին մը ձեռքը ծածանեալ դրօշով մը վերասացեալ մարդուն ընդ առաջ կ'ելնէ, և դրօշին կախուելէն կը գուշակէ մրրիկ, կուրծքը մնուեցընելէն՝ կատարեալ հանդարտութիւն, և զայն քակուած թողլէն, կը նշանակէ զանազան հողմերը։ Բայց ասահ, ծուխ կ'արձրկէ, և առաւօտը, կէսօրը և իրիկունը 30 անձանց համար պատշաճ կերակուրը կուտայ։ Վերջապէս սուլելով ճչդիւ կը հրաւիրէ զվաճառականս 'ի սակարան, զանդակի հնչմամբ՝ զնաւաստիս 'ի նաւահանգիստ, փողոյ ձայնով զգործաւորս յաշխատութիւն։ Այս հրաշալի մեքենան անդադար գործոյ մէջ է, առագաստից կտաւ կը հիւսէ, չուաններ կ'ոլորէ, ցքի կը թորթորէ։ Մէկ մարդ միայն կը հսկէ կաթսային քով, և կարևոր նիւթը կ'ընձեռէ։ Աւելցընենք նաև՝ որ իրիկուան դէմ շրջակայից անթերի երաժշտութիւն մը կու տայ։ կը վառէ հրեղէն սիւն մը, որ կարող է լուսաւորելու փարոսի պէս շատ հեռու։ կրկին և կրկին հրացանաձգութեամբ ընդհանուր հանդատեան ժամանակը կը նշանակէ, և դոյնդոյն լապտերով մը լուսային ամսական տեսիլները կը ցուցընէ։ Ի՞նչ հրաշալիք։

digitised by A.R.A.R.@